ISSN 1829-4820

Филиал МГУ им. М.В. Ломоносова
в г. Ереване

№17(21)

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ
СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ
Научно-методический журнал

MAIN ISSUES
IN MODERN RUSSIAN STUDIES
Scientific Methodological Journal

«Наука есть ясное познание истины, просвещение разума»
М.В. Ломоносов, «Риторика» (1748г.)

2026

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

17 (21)

ԵՐԵՎԱՆ 2026
ЕРЕВАН 2026
YEREVAN 2026

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №17 (21). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2026. – 306 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0002-4377-1601
ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

ИЗУЧЕНИЕ ЛЕКСИЧЕСКОЙ АНТОНИМИИ В ВУЗЕ С УЧЕТОМ СПЕЦИАЛИЗАЦИИ

Лилит Нверовна Аветисян
lilit.avetisyan1981@mail.ru

К.ф.н, доцент,
Доцент кафедры армянского языка и методики его преподавания им. А. Гарибяна,
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна
Ереван, Республика Армения

Манушак Рафиковна Согомонян
manushaksoghomonyan@yandex.com

К.ф.н, доцент,
Доцент кафедры арменоведения,
Государственный университет им. В.Я. Брюсова
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В данной статье рассматриваются вопросы изучения лексической антонимии современного армянского языка на неспециальных факультетах (с учетом специализации и специальной лексики) высших учебных заведений, основанного на выявлении интегральных и дифференциальных признаков лексической синонимии и антонимии, а также соотношения полисемии и антонимии. Предлагается практическое применение полученных студентами теоретических знаний, базирующееся на таких методических приемах как трёхкомпонентная таблица сопоставления, метод текстовой работы и веб-поиска, выполнение словарной и творческой

работы, заданий и упражнений, создание презентаций с помощью *Microsoft Power Point* (или *Google*), и проведение опроса.

Ключевые слова: лексическая антонимия, семантическое противопоставление, антонимо-синонимические ряды, антонимия и полисемия, практические, интерактивные и контрольно-оценочные методы, методические приемы.

Ընդհանրապես թե՛ բառային, թե՛ դարձվածային հականշությանը բնորոշ է իմաստային բևեռայնության առկայությունը: Թե՛ հականիշ բառերը, թե՛ հականիշ դարձվածքները ձևով տարբեր (կամ մասամբ տարբեր) են, սակայն առաջնայինը նրանց բնորոշ իմաստային հակադրությունն է:

Լեզվաբանական գրականության մեջ հականիշները՝ որպես բառերի ձևաիմաստային խմբերի կամ միջբառութային իմաստային հարաբերությունների դրսևորումներ, բնութագրվում են հենց միմյանց հակադիր կամ ներհակ իմաստներ ունենալու հատկանիշով՝ բաժանվելով հակադրական և ժխտական տեսակների (Տես՝ [3: 71; 12: 143]):

Մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է, որ խոսքի մեջ հականշությունը ենթադրում է ասելիքի հակադրություն համատեքստում, չունի ոճական-գործառական լայն հնարավորություններ: Ընդսմին, լեզվում ոչ բոլոր բառերն են, որ կարող են ունենալ ենթադրական, հնարավոր հակադրելի մեկ այլ միավոր [13: 146–147]:

Սույն հոդվածում տրված է բառային հականշության բուհական (գործնական) ուսուցման մեր կարծիքով արդյունավետ կաղապարը: Հականիշ բառերին առնչվող առաջադրանքները ներկայացված են ըստ մասնագիտացումների՝

Ա. Պատմություն և հասարակագիտություն,

Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն,

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա,

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն,

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

Նկատենք, որ հոդվածում ներկայացվում են մասնագիտական տվյալ բնագավառին վերաբերող բառապաշարի հիման վրա ստեղծված վարժություններ և առաջադրանքներ, որոնցում ընդգրկվել են ոչ միայն մասնագիտական (զբաղմունքային) բառերն ու կապակցությունները, մասնագիտական այս կամ այն բնագավառին վերաբերող գիտաբառերը (տերմինները), այլև բառապաշարի այլևայլ շերտերի բառեր: Տեքստային աշխատանքի համար նախատեսված բնագրային նյութը վերաբերում է գիտական ոճին:

Հոդվածում արտացոլված առաջադրանքները, բառարանային և տեքստային աշխատանքները կարելի է քննարկել թե՛ լսարանային (առերես), թե առցանց պարապմունքների ընթացքում: Ըստ դասախոսի նախընտրության՝ դրանք կարելի է հանձնարարել կատարել թե՛ կանխավ (տնային աշխատանք), թե՛ տեղում (լսարանային կամ առցանց աշխատանք):

Սույն հոդվածը գրվել է ՀՊՄՀ ոչ մասնագիտական ֆակուլտետներում հեղինակների դասավանդման փորձի ընթացքում[1]:

Հականիշ բառերի գործնական ուսուցման առումով կարևորում ենք *վարժությունների, առաջադրանքների* կատարումը, ինչպես նաև *հարցումը*[2]*:*

---

[1]Հոդվածի հեղինակներն ընթերցողի դատին են ներկայացրել «Հայոց լեզվի գործնական դասընթաց: Հնչյունաբանություն» [5] և «Հայոց լեզվի գործնական դասընթաց: Բառագիտություն» [4] բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար նախատեսված ուսումնական ձեռնարկները:

[2] *Վարժություններ:* Ուսումնական գործողությունների բազմակի (մտավոր կամ պրակտիկ) կատարումներն ապահովում են թեմայի վերաբերյալ գիտելիքների յուրացումը, ամրապնդումը և բառապաշարի հարստացումը: Դասվում են ուսուցման պրակտիկ մեթոդների շարքը:

Ընդ որում, բառային հականշության ուսուցման համար առաջարկում ենք նաև *եռաթև աղյուսակ* մեթոդական հնարի կիրառումը[3]:

Արդիականության առումով հատկապես կարևորում ենք վեբորոնումը[4] և նրա կիրառումը սույն թեմայի ուսուցման ընթացքում, ինչպես նաև համակարգչային *Microsoft Power Point* կամ *Google* ներկայացումը՝ որպես ուսուցման արդյունավետ միջոց[5]:

Հոդվածում առանձնակի արժևորվում են *աշխատանքը բառարաններով* և *տեքստային աշխատանքը*[6]:

Առաջադրանքներ: Ուսուցման պրակտիկ մեթոդների շարքն են դասվում նաև առաջադրանքները, որոնք նպաստում են ուսումնասիրվող նյութի գործնական յուրացմանը, սովորողների վերլուծական մտածողության և ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողությունների զարգացմանը:

Հարցում: Այս մեթոդի կիրառումը կարևոր է քննարկված նյութի վերաբերյալ ձեռք բերված գիտելիքների ստուգման և ամրապնդման համար: Բանավոր կամ գրավոր հարցադրումներն ունեն թեմայի յուրացման գործընթացը վերահսկող և գնահատող նշանակություն (Տես՝ [1: 70, 322–323]):

[3] *Եռաթև (M-աձև) աղյուսակ:* Երեք բաժնից բաղկացած աղյուսակ է, որը հիշեցնում է *M* տառը: Միևնույն հարցի երեք կողմերը համեմատելու/հակադրելու նպատակով է կիրառվում (Տես՝ [16: 69–70]):

[4] *Վեբ-որոնում (Web-Quest):* Այս մեթոդով ուսուցման ժամանակ համացանցից (կայքեր, առցանց գրադարաններ և այլն) ձեռք են բերվում հետազոտության թեմայի վերաբերյալ տեղեկույթ և գիտելիքներ՝ գործնականում լուծելով առաջադիր հարցը: Պահանջում է էլեկտրոնային եղանակով ստացված տեղեկույթի նկատմամբ ընտրողական վերաբերմունք, նպաստում նյութի բազմակողմանի ուսումնասիրությանը (աշխատանքի արդյունքները կարելի է ներկայացնել բանավոր ելույթով, համակարգչային ներկայացմամբ և այլն) (Տես՝ [16: 18–21]):

[5] *Համակարգչային Microsoft Power Point* (կամ *Google*) *ներկայացումը* (լեզվական իրողությունների) ուսուցման միջոցներից է, որն ուսումնասիրվող նյութի շուրջ աշխատանքը դարձնում է առարկայական և հետաքրքիր, նպաստում սովորողների ինքնուրույնության խթանմանը, համակարգչային ծրագրեր կիրառելու հմտությունների զարգացմանը (Տես՝ [1: 278, 2: 80]):

[6] Այս մեթոդը ենթադրում է թեմայի վերաբերյալ յուրացրած գիտելիքների կիրառում գործնականում: Տեքստի հիման վրա կատարվում է ուսումնասիրված լեզվա-

Այժմ ներկայացնենք բուհի ոչ մասնագիտական ֆակուլտետներում բառային հականշության ուսուցումը՝ ըստ տրամաբանված քայլաշարերի հաջորդականության:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

ա) Գործնականի թեմայի անվանում

Բառերի ձևաիմաստային տեսակները. հականիշ բառեր:

բ) Հիմնական հասկացություններ, առանցքային հարցեր (միայն գործնական պարապմունքի համար)

Բառային հականշություն, հասկացական հակադրություն, իմաստային բևեռայնություն, հականշային զույգեր, հականշահոմանշային շարքեր, հակադրական հականիշներ, ժխտական հականիշներ, հականշություն և բազմիմաստություն, մասնագիտական բառապաշար:

գ) Գործնականի անցկացման մեթոդներ (այլև հնարներ և միջոցներ)

M-աձև աղյուսակ, վարժություններ, առաջադրանքներ, հարցում, տեքստային աշխատանք, վեբ-որոնում, համակարգչային *Microsoft Power Point* (կամ *Google*) ներկայացում:

դ) Գործնականի թեմային առնչվող ուսումնառության նյութեր և էլեկտրոնային նյութեր

1) Բառերի ձևաիմաստային այս կամ այն խմբի (հոմանիշ, հականիշ, համանուն և հարանուն բառեր) ուսուցումն անկարելի է այդ կարգի մյուս խմբերից տարանջատ իրականացնել: Հականիշ բառերի առումով հատկապես ուշագրավ են հոմանշության և հականշության, հա-

---

կան իրողության քննարկում որպես ինքնուրույն աշխատանք: Տեքստի լեզվաոճական վերլուծության ընթացքում քննարկվում են նրանում ի հայտ եկող բառագիտական, քերականական (ձևաբանական և շարահյուսական) իրողությունները, ինչպես նաև ոճական-արտահայտչական միջոցները (Հմմտ.՝ [1: 303–304]):

կանշության և բազմիմաստության փոխհարաբերություններն ու փոխկապակցվածությունը, որոնց էլ անդրադարձ կկատարենք ստորև:

Համեմատության եռաթև (M-աձև) աղյուսակում արտացոլված ներքոհիշյալ և այլ տեսական և գործնական նյութերը նախապես համակարգչային ներկայացմամբ մատուցվում են ուսանողներին: Վեր են հանվում բառային հոմանշության և հականշության նմանությունները, հոմանիշ բառեր և հականիշ բառեր տարբերությունները, ինչպես նաև բազմիմաստության և հականշության փոխհարաբերությունները՝ ընդհանրությունների և առանձնահատկությունների հայեցակետից: Դասախոսը հանդես է գալիս տվյալ դասագործընթացը կառավարողի, խորհրդատուի, ճիշտ ուղղորդողի դերում:

Աղյուսակ 1

Համեմատության եռաթև (*M*-աձև)

Ընդհանրություն	**Տարբերություն**	
Հոմանշություն և հականշություն	***Հոմանիշ բառեր***	***Հականիշ բառեր***
Ընդհանրություն 1. Միջբառութային իմաստային հարաբերություններ:	**Տարբերություն 1.** Ձևով տարբեր, բայց նույնական կամ մոտ իմաստ ունեցող բառեր:	**Տարբերություն 1.** Հնչյունական կազմով իրարից տարբեր (կամ մասամբ տարբեր), իսկ իմաստով հակադիր բառեր:

Ընդհանրություն 2. Խոսքիմասային արժեքի նույնականություն: **Ընդհանրություն 3.** Առնչակցություն բառերի բազմիմաստությանը: **Ընդհանրություն 4.** Բաժանում երկու տեսակի (*հոմանիշների* դեպքում՝ *նունանիշների* և *համանիշների, հականշների* պարագայում՝ *հակադրական* և *ժխտական* խմբերի): **Ընդհանրություն 4.** Հականիշ բառերի հոմանշային հարաբերություններ մյուս բառերի հետ և, ըստ այդմ, հականշահոմանշային յուրահատուկ շարքերի կազմություն: **Տարբերություն 5.** *Լեզվական* (բառային մակարդակում, խոսքից դուրս դիտարկվող) և *խոսքային* (միայն խոսքում, ոչ խոսքից դուրս դիտարկվող) հոմանիշների ու հականիշների առկայություն:	**Տարբերություն 2.** Տեսակները՝ *նունանիշներ* (իմաստով նույնական) և *համանիշներ* (իմաստով մերձավոր):	**Տարբերություն 2.** Տեսակները՝ *հակադրական* (տարարմատ) և *ժխտական* (նույնարմատ):
	Տարբերություն 3. Խոսքի ոճավորման, հուզարտահայտչականանության, նրբերանգային-նրբիմաստային տարբերություններ դրսևորելու, իմաստային աստիճանական սաստկություն արտահայտելու, բառիմաստային կապակցելիության տարբերություններ ի հայտ բերելու և խոսքում միօրինակությունից խուսափելու լայն հնարավորություններ:	**Տարբերություն 3.** Խոսքում ներհակություն արտահայտելու նպատակադրումով գործածություն, իմաստային հակադրության շեշտում: Գործառական-ոճական տեսանկյունից սահմանափակ հնարավորություններ: Հակադրույթ (անտիթեզ) ոճական միջոցի առկայություն հականիշների կիրառությամբ:
	Տարբերություն 4. Համանշային երկանդամ և բազմանդամ շարքերի առկայություն:	**Տարբերություն 4.** Երկանդամ հակադրություն. հականշային զույգերի առկայություն:
	Տարբերություն 5. Քանակական առավելություն հականիշ բառերի համեմատությամբ:	**Տարբերություն 5.** Հոմանշության համեմատությամբ ոչ մեծ տարածվածություն:

2)

Աղյուսակ 2

Համեմատության եռաթև (*M*-աձև)

Ընդհանրություն	**Տարբերություն**	
Բազմիմաստություն և հականշություն	***Բազմիմաստություն***	***Հականշություն***
Ընդհանրություն 1. Բառերի իմաստային հարաբերություններ: **Ընդհանրություն 2.** Բառերի հականշության և բազմիմաստության (այլև հոմանշության և բազմիմաստության) փոխկապակցվածություն. բազմիմաստ բառի՝ յուրաքանչյուր իմաստի համար առանձին հականիշ ունենալու հնարավորություն, ընդսմին, իմաստներից ոչ բոլորի համար միևնույն բազմիմաստ բառի հականիշներ ունենալու հատկանիշի առկայություն:	**Տարբերություն 1.** Բառերի ներսում առկա իմաստային հարաբերություններ:	**Տարբերություն 1.** Բառերի միջև առկա իմաստային (հակադրական) հարաբերություններ:
	Տարբերություն 2. Մեկից ավելի իմաստների համատեղում մեկ բառի իմաստային ծավալում և այդ իմաստների միջև ընդհանրության առկայություն:	**Տարբերություն 2.** Հակադիր հասկացություններ արտահայտող բառազույգեր:

3) **Վարժություն**

Տրված բառաշարքից ընտրե՛ք և գրե՛ք հականշային 10 զույգ:

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Թագադրել, թագավորամեծար, համբավազրկել, միաբանություն, կալանավորություն, ազատագրել, ոսոխ, հաղթել, միակնություն, մեղսագիտակ, կենտրոնամետ, վտարանդել, գահազրկել, դաշնակից, արքայանարգ, անմիաբանություն, ջատագովել, անմեղսունակ, ձերբազատում, զավթել, բազմակնություն, կենտրոնախույս:

Բ. Կուլտուրա

Գեղարվեստական կրթություն

Բազմաձիրք, ձյունասպիտակ, կատակերգու, դժգունակ, աշխարհիկ, բարձրարվեստ, հնատարազ, տմույն, մուգ, անպաճույճ, տաղանդազուրկ, լաջվարդ, սնաթույր, ողբերգակ, բաց, երփնաթույր, կրոնական, ասվյա, ցածրահարգ, նորառճ, պայծառ, պճնազարդ:

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Համբերազուրկ, փոփոխամիտ, տխմար, մելամաղձություն, երևակայածին, համակրանք, համադրություն, հավատավոր, տագնապախռով, հանդուրժամիտ, անփույթ, անխաբուսիկ, խելամիտ, ամբարտավան, ուրախություն, վճռականություն, հակադրություն, վճռալից, անդավանանք, անհաստատակամություն, հանգիստ, հակակրանք:

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Անոսր, բերրիություն, մակընթացություն, տարասեռություն, անաղիք, տեղաբնիկ, ազգակից, խիտ, ցամաքային, անողնաշար, հյուսիս, մամռապատ, ընդգետնյա, անպտղություն, տեղատվություն, տարաշխարհիկ, նմանասեռություն, տարասեր, ջրային, հարավ, վերերկրյա, ողնաշարավոր:

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա

Հանելի, արտագծել, արագացում, կլանել, ձգել, հոսանք, անոդ, ստատիկա, լիցքավորում, խտություն, համեմատել, գումարելի, կասեցնել,

ներգծել, դանդաղեցում, արտամղել, վանել, կատոդ, նոսրություն, դինամիկա, պարպում, գործարկել:

4) Բառարանային աշխատանք

ա) Հ.Խ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարանից» (Ե., 1973) դո՛ւրս գրեք առնվազն յոթ այնպիսի բառեր, որոնք ունեն իրենց հոմանիշը և հականիշը:

բ) Կազմե՛ք այդ բառերի հոմանշային և հականշային զույգերը՝ համակարգչային Microsoft Power Point կամ Google ներկայացման միջոցով (մինչև 7 սահիկ) դրանք ներկայացնելով առցանց ուսուցման հարթակում (ըստ ձեր մասնագիտական բառապաշարի).

Ա. Պատմություն և հասարակագիտություն: Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն: Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա: Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն: Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

5) Տեքստային աշխատանք

ա) Արտահայտիչ ընթերցե՛ք հետևյալ տեքստային հատվածները:

բ) Ընտրե՛ք հինգ բառ՝ կազմելով յուրաքանչյուրի հոմանշային և հականշային զույգերը (շարքերը. հականշություն հոմանշային զույգերի կամ շարքերի միջև):

Ա. Պատմություն և հասարակագիտություն

Հայ առևտրական կապիտալի զարգացումը Հայաստանում ու Անդրկովկասում, ինչպես և գաղթավայրերում հիմք էր դառնում ոչ միայն երկրի տնտեսական զարթոնքին ու վերելքին, այլև նպաստում էր նրա հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի վերակենդանացմանը: Ազատագրական շարժումների արշալույսին հայ առաջավոր աշխարհիկ ու հոգևոր գործիչները քաջ գիտակցել են պատմագրության դերն ու նշանակությունը ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման, լուսավորության տարածման ու արմատավորման և սե-

ռունդներին հայրենասիրության ոգով դաստիարակելու գործում: Հայաստանի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքի վերելքն ու զարգացումը նախապատրաստել են նաև հայ ազատագրական շարժումների զարթոնքը, որը և բախտորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հետագա ճակատագրում [8: 44]:

Նմուշ՝ *զարգացում – առաջադիմում* (հոմանիշ բառեր),

զարգացում – հետամնացություն (հականիշ բառեր),

զարգացում, առաջադիմում, առաջադիմություն – հետամնացություն, հետագնացություն, հետընթացություն (հնց.), *ետքայլ* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Բ. Կուլտուրա: Գեղարվեստական կրթություն

Ինչպես հայտնի է, թատրոնը ծագել է հրապարակային հանդիսությունից, ծեսից, իսկ հրապարակային հանդիսությունը ներառել է խաղարկային արվեստների ողջ ներկապնակը՝ բանահյուսություն և երաժշտություն, կրկես ու պարարվեստ՝ ձևավորելով տարբեր արվեստների միահյուսում, տարբեր խաղաձևերի համադրում: Թատրոնի՝ նման համադրական՝ սինկրետիկ (հուն.՝ «միացում, միակցում») տեսակը ժամանակի ընթացքում տրոհվեց, և խաղարկային արվեստի ամեն տեսակ գտավ իր տեղը՝ ձեռք բերելով իր ուրույն գեղարվեստական լեզուն: Իր գեղագիտությունը ձեռք բերեց նաև դրամատիկական թատրոն կոչվածը, այսպես ասած՝ սինթետիկ թատրոնը [10: 29]:

Նմուշ՝ *միակցում – համակցում* (հոմանիշ բառեր),

միակցում – տրոհում (հականիշ բառեր),

միակցում, միակցություն, միավորում, կապակցություն, կապակցում, համակցում, համակցություն, շաղկապում – տրոհում, տրոհություն, անջատում, բաժանում, զատում, առանձնացում, տարանջատում (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Գ. Կրթության հոգեբանություն և սոցիոլոգիա

Որպես կամային հատկանիշ կարևոր է անձի կայունությունը, որը դրսևորվում է գիտակցաբար դրված նպատակին հասնելու համառ ձգտման մեջ: Այս հատկությունը կարելի է զարգացնել գործունեության ընթացքում, որն արտահայտվում է ոչ միայն աշխատանքային գործընթացում, այլ նաև նրա կենսագործունեության մեջ [11: 259]: «Թշնամի» հասկացությունը թույլ է տալիս անձնավորել չարը, ինչպես «բարեկամը»՝ բարին: «Թշնամի-բարեկամ» մասնավոր տարբաժանումից կարելի է անցնել ավելի ընդհանուր՝ «յուրային-օտար» տարբաժանմանը [6: 24]:

Նմուշ՝ *գիտակցաբար – դատողաբար* (հոմանիշ բառեր),

գիտակցաբար – անգիտակցորեն (հականիշ բառեր),

գիտակցաբար, գիտակցապես, գիտակցականորեն, բանականորեն, բանականաբար, բանականապես, տրամաբանորեն, տրամաբանաբար, տրամաբանապես, դատողաբար, խելացի, խելացիաբար, խելացիորեն – անգիտակցորեն, անգիտակցաբար, անգիտակցապես, բնազդաբար, բնազդորեն, ինքնաբերաբար, ինքնաբերապես, ինքնաբերորեն, մեքենաբար, մեքենայնաբար, մեքենայնապես, մեքենայնորեն, ենթագիտակցաբար, ինքնին (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Դ. Կենսաբանություն, քիմիա և աշխարհագրություն

Կանայք հիվանդանում են ոչ միայն այն հիվանդություններով, որոնցով տղամարդիկ են հիվանդանում, այլև մենահատուկ հիվանդություններով, որը կապված է նրանց սեռի հետ: Կանանց օրգանիզմը բնութագրվում է ճարպի ավելի մեծ պարունակությամբ, ուր կարող են կուտակվել նշանակալից քանակով թունավոր, հիդրոֆոբ միացություններ [9: 104]:

Մթնոլորտային ճնշման փոփոխման պատճառը, ջերմաստիճանի փոփոխման հետևանքով պայմանավորված, օդի տեղաշարժն է մի վայրից մյուսը: Այդ տեղափոխությունները՝ արտահոսքը մի վայրից և ներ-

հոսքը մյուս վայրը, կապված են ստորադիր մակերևույթից օդի անհավասարաչափ տաքացման հետ [14: 29]:

Նմուշ՝ *հիվանդություն-ախտ* (հոմանիշ բառեր),

հիվանդություն-առողջություն (հականիշ բառեր),

հիվանդություն, տկարություն, անառողջություն, ախտ, ցավ, ախտաժետություն (հզվդ.), *խոթություն* (հնց.), *հիվանդկախություն* (ժող.), – *առողջություն, առողջանդամություն, ողջություն, ողջանդամություն* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

Ե. Մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա:

Գերմանացի մաթեմատիկոս Շվարցը նկատեց, որ այնպիսի պարզ մակերևույթին, ինչպիսին շրջանային գլանն է, կարելի է ներգծել բազմանիստ, որի մակերեսը կարող է մեծ լինել ցանկացած դրական թվից [17: 162]:

Հայտնի է, որ էլեկտրամագնիսական ալիքների երկարությունները փոփոխվում են չափազանց լայն տիրույթում: Լույսի էլեկտրամագնիսական բնույթի պարզաբանումը թույլ է տվել բոլոր տիպի էլեկտրամագնիսական ճառագայթները դասակարգել և միավորել էլեկտրամագնիսական ալիքներ սանդղակում: Էլեկտրամագնիսական ալիքներն ընդունված է բաժանել ռադիոալիքների, միկրոալիքների, ինֆրակարմիր ճառագայթների, տեսանելի լույսի, ուլտրամանուշակագույն ճառագայթների, ռենտգենյան ճառագայթների և գամմա ճառագայթների: Էլեկտրամագնիսական ալիքների կլանման, անդրադարձման և այլ հատկություններն էապես կախված են դրանց ալիքի երկարությունից [15: 3–4]:

Ֆայլերը հիմնարար դեր են խաղում տվյալների երկարատև պահպանման և կառավարման հարցում, ինչպես նաև ապահովում են միջծրագրային համագործակցության պարզագույն ձևը [7: 17]:

Նմուշ՝ *միավորել-մեկտեղել* (հոմանիշ բառեր),

միավորել-բաժանել (հականիշ բառեր),

միավորել, միացնել, միաձուլել, միահյուսել, միակցել, համակցել, առկցել, զոդել, միատեղել, մեկտեղել, միատարրել, զուգամիավորել – բաժանել, անջատել, առանձնացնել, երկատել, զատել, ջոկել (ժող.), *դեն դնել* (հականշություն հոմանշային շարքերի միջև):

ե) Հետադարձ կապի ապահովում և ստուգում/ գնահատում

Հարցեր

1. Որո՞նք են բառերի ձևաիմաստային խմբերը: Լեզվական (ձևաիմաստային) ի՞նչ յուրահատկություններով է պայմանավորված դրանց տարբերակումը:
2. Որո՞նք են հականիշ բառերը:
3. Որո՞նք են հականիշների տեսակները:
4. Որո՞նք են լեզվական և խոսքային հականիշները: Ի՞նչ առանձնահատկություններով են դրանք բնութագրվում:
5. Բազմիմաստությունն ու հականշությունն ի՞նչ փոխհարաբերություններ ունեն:
6. Ի՞նչ ընդհանրություններ և տարբերություններ ունեն հոմանիշ և հականիշ բառերը:

Առաջադրանքներ

ա) Ինքնուրույն-հետազոտական աշխատանք

Կատարե՛ք Վեբ-որոնում (*հղում.* https://www.youtube.com)՝ ներկայացնելով *հոմանիշ և հականիշ* բառերի, նրանց բնորոշ առանձնահատկությունների վերաբերյալ որոնողական-հետազոտական աշխատանք: Հոլովակը (օրինակ՝ Պ. Սևակի «Որդուս» բանաստեղծության ընթերցում. կարդում է Վոլոդյա Աբաջյանը) և ձեր վերլուծությունները ներբեռնե՛ք առցանց ուսուցման հարթակ:

բ) Ստեղծագործական աշխատանք

Հյուսել կապակցված խոսք (ստեղծագործական շարադրություն)[7]՝ գործածելով տրված հականշային զույգերը:

Հակադրական (տարարմատ) հականիշներ. *աղոտ – պայծառ, բարձրանալ – իջնել, դրախտ – դժոխք:*

Ժխտական (նույնարմատ հականիշներ). *գեղեցիկ – տգեղ, շքեղ – անշուք, երջանիկ – ապերջանիկ:*

Թեմայի գնահատում

Ընթացիկ գնահատում. վերլուծական աշխատանք. Բառագիտական (իմաստաբանական) վերլուծություններ՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Բառարանային աշխատանք (ինքնուրույն աշխատանք լեզվաբանական բառարաններով):

Տեքստային աշխատանք՝ ըստ մասնագիտական ուղղվածության:

Արտահայտիչ ընթերցանություն:

Հետադարձ կապ՝ բանավոր վերլուծություն:

Գնահատման թերթիկ: Հարցաթերթեր:

Կապակցված խոսք. ստեղծագործական շարադրություն:

Մասնակցություն. հետադարձ կապ՝ գրավոր վերլուծություն:

---

[7] Պահպանել հետևյալ պահանջները.

ա) անհրաժեշտ կառուցվածք. սկիզբ, հիմնամաս և ավարտ,

բ) ուղղագրական և կետադրական կանոնների հաշվառում,

գ) բառային կրկնությունների, բառաձևերի գործածության սխալների, ավելորդ բառերի, ինչպես նաև ոճականորեն, քերականորեն և տրամաբանորեն սխալ ձևակերպումների բացակայություն,

դ) խոսքի պատկերավորություն, հեղինակային վերաբերմունքի առկայություն և հուզական ներգործություն,

ե) հականիշ բառերի ոճական հնարավորությունների հաշվառում,

զ) խմբագրական աշխատանք կատարելուց հետո արտահայտիչ ընթերցանությամբ ներկայացում ողջ լսարանին:

Քննարկվող հարցերին տրվող պատասխանների գնահատում:
Քննարկման արդյունքների ամփոփում:

ЛИТЕРАТУРА

1. *Азимов Э.Г.* Новый словарь методических терминов и понятий (теория и практика обучения языкам) / Э.Г. Азимов, А.Н. Щукин. – М.: Изд-во Икар, 2009. – 448 с. – EDN: XQRFTT.
2. *Раджабов Б.Ф.* Современные методы обучения студентов с использованием ИКТ в условиях Республики Таджикистан // Сб. науч. ст. по итогам международной науч.-практ. конф. «Наука нового времени: от идеи к результату» (Санкт-Петербург, 18–19 августа 2017 г.). – СПб.: Изд-во «КультИнформПресс», 2017. – СС. 79–80.
3. *Աղայան Է.Բ.* Ընդհանուր և հայկական բառագիտություն: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 1984: – 372 էջ:
4. *Ավետիսյան Լ.Ն., Սողոմոնյան Մ.Ռ.* Հայոց լեզվի գործնական դասընթաց: Բառագիտություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար / Լ.Ն. Ավետիսյան, Մ.Ռ. Սողոմոնյան, խմբ.՝ Վ.Գ. Համբարձումյան: – Երևան՝ «Էդիթ Պրինտ» հրատ., 2022: – 192 էջ:
5. *Ավետիսյան Լ.Ն., Սողոմոնյան Մ.Ռ.* Հայոց լեզվի գործնական դասընթաց: Հնչյունաբանություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետների համար / Լ.Ն. Ավետիսյան, Մ.Ռ. Սողոմոնյան, խմբ.՝ Լ.Մ. Խաչատրյան: – Երևան՝ Էդիթ Պրինտ, 2017: – 160 էջ:
6. *Ավետիսյան Ղ.Ա.* Յուրային-օտար. սոցիոմշակութային համատեքստ / Ղ.Ա. Ավետիսյան: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 2019: – 194 էջ:
7. *Ավետիսյան Ս., Քոչարյան Ա., Հովհաննիսյան Մ.* «Windows» օպերացիոն համակարգեր (ուսումնամեթոդական ձեռնարկ) / Ս. Ավետիսյան, Ա. Քոչարյան, Մ. Հովհաննիսյան: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 2021: – 90 էջ:
8. *Գասպարյան Ա.* Հասարակական-քաղաքական կյանքի արտացոլումը XVII–XVIII դարերի հայ պատմագրության մեջ // Գիտական աշխատություններ, 2005, Հ. VIII / ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն: – Գյումրի՝ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2005: – էէ. 44–48:
9. *Գրիգորյան Կ.Վ.* Մարդու էկոլոգիա: Ուսումնական ձեռնարկ / Կ.Վ. Գրիգորյան, Ծ.Ի. Ադամյան: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 2013: – 256 էջ:

10. *Էլբակյան Ա.* Ռեժիսուրա. զրույց հողմաղացի հետ / Ա. Էլբակյան: – Երևան՝ Տիգրան Մեծ, 2015: – 156 էջ:
11. *Լոքյան Ա.* Կառավարչական գործունեության ազդեցությունը անձի հոգեբանական հատկությունների ձևավորման վրա // «Կանթեղ»: Գիտական հոդվածների ժողովածու, № 3 (56): – Երևան՝ «Ասողիկ» հրատ., 2013: – էէ. 258–264:
12. *Խաչատրյան Լ.Մ.* Լեզվաբանության ներածություն / Լ.Մ. Խաչատրյան // Խմբ.՝ Լ.Ս. Հովսեփյան, ՀՊՄՀ: – Երևան՝ «Զանգակ-97» հրատ., 2008: – 304 էջ:
13. Համբարձումյան Վ.Գ. Լեզվաբանության հիմունքներ / Վ.Գ. Համբարձումյան: – Երևան՝ «Ասողիկ» հրատ., 2019: – 368 էջ:
14. *Պողոսյան Վ.Խ.* Ընդհանուր երկրագիտություն: Գիրք երկրորդ. Երկրագնդի մթնոլորտը և կլիմաները (Ուսումնական ձեռնարկ) / Վ.Խ. Պողոսյան: – Երևան՝ «Նահապետ» հրատ., 2007: – 180 էջ:
15. *Սարգսյան Հ.Ռ.* Էլեկտրոնային կլանման սպեկտրոսկոպիա. կիրառումը քիմիական և կենսաբանական համակարգերում (Ուսումնամեթոդական աշխատանք) / Հ.Ռ. Սարգսյան: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 2015: – 28 էջ:
16. *Սարուխանյան Ս.* Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ: Մեթոդական ձեռնարկ / Կազմ.՝ Ս. Սարուխանյան, Ա. Դալլաքյան, Ն. Դիշաղաջյան; խմբ.՝ Ա. Իսկանդարյան; Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ: – Վանաձոր՝ «Վանատուր» ՍՊԸ տպ., 2008: – 101 էջ:
17. *Օհանյան Վ.Հ.* Մաթեմատիկական անալիզ (դասախոսություններ) / Վ.Հ. Օհանյան: – Երևան՝ ԵՊՀ հրատ., 2021: – 208 էջ:

ԲԱՌԱՅԻՆ ՀԱԿԱՆՇՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ՝ ԸՍՏ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ

Լ.Ն. Ավետիսյան

lilit.avetisyan1981@mail.ru

Բ.գ.թ., դոցենտ,
Ա. Ղարիբյանի անվ. հայոց լեզվի
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,

Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Մ.Ռ. Սողոմոնյան

manushaksoghomonyan@yandex.com

Բ.գ.թ., դոցենտ,
Հայագիտության ամբիոնի դոցենտ,
Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննության են առնվում բուհական համակարգի ոչ մասնագիտական ֆակուլտետներում (ըստ մասնագիտացումների և նրանց համապատասխան բառապաշարի) արդի հայերենի հականիշ բառերի ուսուցման հարցերը՝ բառային հոմանշություն և հականշություն ընդհանրությունների և տարբերությունների, ինչպես նաև բազմիմաստություն և հականշություն փոխհարաբերությունների վերհանման միջոցով: Առաջարկվում է ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ ըստ համեմատության եռաթև աղյուսակ մեթոդական հնարի, տեքստային աշխատանք և վեբ-որոնում մեթոդների, բառարանային և ստեղծագործական աշխատանքների, համակարգչային *Microsoft Power Point* (կամ *Google*) ներկայացման, հարցման, ինչպես նաև ըստ վարժությունների և առաջադրանքների կատարման:

Բանալի բառեր՝ բառային հականշություն, իմաստային հակադրություն, հականշահոմանշային շարքեր, հականշություն և բազմիմաստություն, փոխներգործուն (ինտերակտիվ) և վերահսկող-գնահատող մեթոդներ, մեթոդական հնարներ:

LEXICAL ANTONYMY LEARNING AT UNIVERSITY ACCORDING TO SPECIALIZATIONS

L. Avetisyan
lilit.avetisyan1981@mail.ru

Candidate of Sciences (Philology), Associate Professor,
Associate Professor at the Department of Armenian Language
and its Teaching Methods after A. Gharibyan,
Kh. Abovian Armenian State Pedagogical University
Yerevan, Republic of Armenia

M. Soghomonyan
manushaksoghomonyan@yandex.com

Candidate of Sciences (Philology), Associate Professor,
Associate Professor at the Department of Armenian Studies,
Brusov State University
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

This article examines the questions of teaching modern Armenian antonyms by lexical synonymy and antonymy commonalities and differences, as well as by discovering of the relationship of polysemy and antonymy in the non-professional faculties of the university system (according to the specializations and their appropriate vocabulary). Recommended to apply students acquired theoretical knowledge in practice according to the comparative three-tables methodological approach, text work and Web-Quest methods, dictionary and creative works, computer *Microsoft Power Point* (or *Google*) presentation, question, as well as according to performing of exercises and tasks.
Keywords: lexical antonymy, semantic contrast, synonymic-antonymic lines, antonymy and polysemy, practical teaching methods, interactive teaching methods, control and evaluation teaching methods, methodological approaches.

Информация о статье:
статья поступила в редакцию 19 марта 2026 г.,
подписана к печати в номер 17 (21) / 2026 – 25.06.2026 г.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

Главный редактор

Саркисян И.Р. – д.п.н., профессор, профессор кафедры русского языка и профессиональной коммуникации Института филологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета, заслуженный профессор РАУ.

ORCID: 0000-0002-4377-1601
SPIN-код: 8936-7319, AuthorID: 1056296

Составитель, технический редактор, вёрстка и дизайн

Акопян А.С. – ст. преподаватель кафедры русского языка и профессиональной коммуникации Института фи-лологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета; ст. преподаватель Санкт-Петербургского политехнического университета Петра Великого (СПбПУ); доцент Медицинского института имени Меграбяна; Действительный член (академик) Международной Академии Нейронаук (МАН, РА).

ORCID: 0000-0001-9263-6791
SPIN-код: 1465-8539 / Author ID: 1045228

Корректоры:
Акопян А.С., Согомонян М.Р., Мурадян К.Г.

Адрес Редакции научных изданий
Филиала Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване:
0025 РА, г. Ереван, ул. Вардананц 17
e-mail: po@msu.am

Заказ № 25
Подписано к печати – 28.06.2026 г.
Формат 60x84$^{1}/_{16}$. Бумага офсетная № 1.
Объем – 19,125 печ. л. Тираж 250 экз.